ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան | 26-ը հոկտեմբերի 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոշտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքլվացարանային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են:

Հաշվի առնելով, որ «ՍԱՔԻ» ՍՊԸ –ն 1-ին չափաբաժնով ներկայացրել է համարժեք տեխնիկական բնութագիր, հանձնաժողովի գնահատող անդամ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյանի կողմից հանձնաժողովին ներկայացվեց մասնագիտական եզրակացություն, որ «ՍԱՔԻ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համարժեք է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 26.10.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց <ՍԱՔԻ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և, քանի որ ընթացակարգին մասնակցել է մեկ կազմակերպություն, հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ չկիրառել և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Վ. Պապյան |
| **Գնահատող** | Գ. Ռիստյան |
| **Գնահատող** | Վ. Բարսեղյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Գրիգորյան |